# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 04.10.2018թ. N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/46 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ք. Երևան** «02» «05» 2019թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Արտակ Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամն, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 04.10.2018թ. N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/46 պայմանագրի 7.5 կետը, Հավելված 1-ի 1.1 և 3 կետերի պահանջը կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 04.10.2018թ. N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/46 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 2018 թվականին սկսված 2019 թվականին շարունակվող ծառայությունների մատուցման նպատակով, կատարել հետևյալ փոփոխությունը.

1.2 Պայմանագրի Հավելված 1-ի 3-րդ կետի համաձայն, 2019 թվականին ծառայությունների մատուցման համար Պայմանագրում ավելացնել նոր վճարման ժամանակացույց՝ համաձայն Հավելվածի:

### 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

### 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, Համաձայնագրով հաստատված Հավելվածը՝ 1 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը և սույն Համաձայնագրով հաստատված Հավելվածը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ |
| ք. Երևան, Կառավարական շենք N 3 | ք. Երևան, Մ. Մկրտչյան 5ա |
| *(հասցեն)* | *(հասցեն)* |
| Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | Բանկի անվանումը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| h/h 900011024990, հվհհ 02536701 | h/h 1930059757870100 հվհհ 02562459 |
| *(բանկային վավերապայմանները)* | *(բանկային վավերապայմանները)* |
| **Գլխավոր քարտուղար** /Ա. Գրիգորյան | **Տնօրեն** Ա. Գրիգորյան |

հավելված
"02" "05" 2019թ-ին կնքված N 1 համաձայնագրի
04.10.2018թ-ին կնքված N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/46 գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ...երով ...խա ...ված ...իա ...ժնի ...արը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում. | | | | | | | | | | | | |
| | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 80531100/1 | Ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցության ծառայությունների մատուցում | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | | | | | 1312500 | 1575000 | 1837500 | 2100000 | 2362500 | 2625000 | 2887500 | 3150000 | 3150000 |
| Ընդամենը | | | | | | | **1312500** | **1575000** | **1837500** | **2100000** | **2362500** | **2625000** | **2887500** | **3150000** | **3150000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Գլխավոր քարտուղար /Ա. Գրիգորյան
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Տնօրեն Ա. Գրիգորյան
Կ.Տ.